# Սիսիան-Քաջարան (Հյուսիս-Հարավ միջանցք) ճանապարհահատվածի ծրագիր

| | |
|---|---|
| **Երկիր՝** | Հայաստան |
| **Ծրագրի համար՝** | 51293 |
| **Բիզնես ոլորտ՝** | Ենթակառուցվածք, Եվրասիա |
| **Ծանուցագրի տեսակ՝** | Պետական |
| **Բնապահպանական կատեգորիա՝** | Ա |
| **Հաստատման նախատեսվող օր՝** | Մայիսի 01, 2024թ. |
| **Կարգավիճակ՝** | Հայեցակարգն ուսումնասիրվել է |
| **ԾԱՓ-ն հրապարակվել է՝** | Փետրվարի 26, 2024թ. |

## Ծրագրի նկարագրությունը

Մինչև 225 միլիոն եվրոյի չափով սուվերեն վարկի տրամադրում՝ Հյուսիս-հարավ ճանապարհային միջանցքի (ՀՀՃՄ) 24 կմ-ոց Սիսան-Քաջարան հարավային ճանապարհահատվածը («Ծրագիր») համաֆինանսավորելու համար:

Սիսան-Քաջարան ճանապարհը կազմված է նաև Բարգուշատի թունելից և հյուսիսային ճանապարհահատվածից, որն ակնկալվում է, որ կֆինանսավորվի Եվրոպական Ներդրումային Բանկի (ԵՆԲ) կողմից, Ասիական Զարգացման Բանկի (ԱԶԲ) և ՀՀ կառավարության կողմից:

## Ծրագրի նպատակները

Ծրագիրը կարևոր նշանակություն ունի Հայաստանի ազգային և տարածաշրջանային կապակցվածության համար, և ակնկալվում է, որ էապես կնվազեցնի ճանապարհորդության հեռավորությունը (130 կմ-ից 60 կմ-ի) և ճանապարհորդության համար ծախսվող ժամանակը (ներկայիս 3-4 ժամից մինչև 1 ժամի) և կապահովի ավելի արագ և անվտանգ կապ Հայաստանի հեռավոր, հարավային մարզի՝ Սյունիքի և Երևանի, երկրի մնացած մասերի և արդյունքում ԵՄ-ի հետ՝ Վրաստանի և Սև ծովի միջոցով:

Ծրագիրը ներառված է Եվրամիության Գլոբալ դարպասների շրջանակներում և ԵՄ տնտեսական և ներդրումային պլանի շրջանակներում նաև համապատասխանեցված է ԵՄ երկու առաջնահերթ հատուկ ծրագրերի, այդ թվում նաև թիվ 2 առաջնահերթ հատուկ ծրագրի հետ *(«Ցամաքային տրանսպորտային կապի բարելավում, այդ թվում նաև Տրանս եվրոպական տրանսպորտային միջանցքների (TEN-T) ներդրումային ինդիկատիվ գործողությունների ծրագրում որոշված առաջնահերթ ծրագրերի իրականացման միջոցով»* և թիվ 4 առաջնահերթ հատուկ ծրագրի հետ (*«Հայաստանի հարավային շրջաններում դիմակայության ձևավորում»*), որի նպատակն է նպաստել Հայաստանի հարավային և քիչ կապակցվածություն ունեցող մարզում՝ Սյունիքում, կայուն սոցիալ-տնտեսական և ինստիտուցիոնալ զարգացմանը: Ծրագիրը

նաև Հայաստանում փախստականների կարիքներին ՎԶԵԲ-ի արձագանքման ծրագրի մաս է կազմում, քանի որ սա կնպաստի Սյունիքի՝ ամենաշատ տուժած հարավային մարզի դիմակայունությանը:

## Ազդեցությունն անցումային շրջանի վրա

Ակնկալվող անցումային ազդեցության ցուցանիշ (ETI) 69

Ակնալվում է, որ Ծրագիրը կաջակցի ինտեգրված անցում կատարելու որակի ապահովմանը՝ երկրի մնացած մասի հետ Սյունիքի մարզի՝ ավելի արագ և անվտանգ միակցվածությանը, այնուհետև Սև ծովով դեպի Վրաստան և ԵՄ՝ ընդլայնված TEN-T միջանցքի շրջանակներում: Ավելին, ակնկալվում է, որ ծրագիրը կաջակցի լավ կառավարվող անցման որակին՝ բարելավելով Հայաստանում ճանապարհային ակտիվների կառավարման պրակտիկան:

## Տեղեկատվություն պատվիրատուի վերաբերյալ

Սուվերեն վարկ Հայաստանի Հանրապետությանը

Իրականացնող գերատեսչությունը հանդիսանում է Տարածքային կառավարման և ենթա-կառուցվածքների նախարարության «Ճանապարհային դեպարտամենտ» հիմնադրամը:

## ՎԶԵԲ-ի կողմից տրամադրվող ֆինանսավորում

225,000,000.00 եվրո

Սուվերեն վարկ՝ մինչև 225 միլիոն եվրոյի չափով:

## Ծրագրի ընդհանուր արժեքը

330,000,000.00 եվրո

Ծրագրի ընդհանուր գնահատված արժեքը կազմում է 330 միլիոն եվրո՝ առանց ԱԱՀ: Ակնկալվում է, որ ԱԱՀ-ն կֆինանսավորրվի Պատվիրատուի կողմից:

Ակնկալվում է, որ Ծրագիրը կհամաֆինանսավորվի ԵՆԲ-ի կողմից հատկացվող սուվերեն վարկով:

Ծրագիրը կշահի նաև տեխնիկական աջակցությունից, որի նպատակն է օգնել ծրագրի նախապատրաստմանն և իրականացմանը:

## Բնապահպանական և սոցիալական ազդեցության ամփոփ նկարագիր

Ա դաս (ԲՍՔ 2019թ.): Ծրագիրը ստացել է բնապահպանական Ա դաս, քանի որ այն կարող է ունենալ ճանապարհի շինարարության և շահագործման հետ կապված զգալի Բնապահպանական և սոցիալական (ԲՍ) ազդեցություններ:

2016-2019թթ-ի ընթացքում Սիսիան-Քաջարան ողջ ճանապարհահատվածի համար Տեխնիկատնտեսական իրագործելիության ուսումնասիրություն (ՏԻՈՒ) և Մանրամասն նախագիծ (ՄՆ) է մշակվել և ֆինանսավորվել է ԱԶԲ-ի կողմից: ՏԻՈՒ-ի և ՄՆ-ի հետ միասին մշակվել է Շրջակա միջավայրի ազդեցության գնահատում (ՇՄԱԳ), որի համար պետական բնապահպանական ուսումնասիրության արդյունքում 2018թ-ի մարտին տրամադրվել է

դրական եզրակացություն: Այնուամենայնիվ, այս եզրակացության գործողության ժամկետը լրացել է 2019թ-ի մարտին և 2023թ-ի մարտ ամսին «Ճանապարհային դեպարտամենտ» հիմնադրամը (ՃԴ) կրկին մեկնարկեց ՇՄԱԳ գործընթացը՝ օգտագործելով թարմ տեղեկատվությունը: 2023թ-ի նոյեմբերին ՃԴ-ն ստացավ ՇՄԱԳ-ի նոր, դրական եզրակացություն (այն է՝ Պետական փորձագիտական եզրակացություն):

Անկախ խորհրդատու ներգրավվեց՝ ճանապարհային միջանցքի համար հրապարակային բացահայտման համար նախատեսված համապարփակ Բնապահպանական և սոցիալական ազդեցությունների գնահատման փաթեթ մշակելու համար, ներառելով՝

- Շրջակա միջավայրի և սոցիալական ազդեցության գնահատումը («ՇՄՍԱԳ»),
- Բնապահպանական և սոցիալական կառավարման պլանը («ԲՍԿՊ»),
- Բնապահպանական և սոցիալական Գործողությունների ծրագիրը («ԲՍԳԾ»),
- Կենսաբազմազանության գործողությունների ծրագիրը («ԿԳԾ»),
- Ոչ տեխնիկական ամփոփագիրը (ՈՏԱ),
- Շահագրգիռ կողմերի ներգրավման պլան (ՇԿՆՊ),
- Տարաբնակեցման շրջանակը (ՏՇ):

ՎԶԵԲ-ի և Պատվիրատուի կայք-էջերում ՇՄՍԱԳ փաստաթղթերը հրապարակվեցին համապատասխանաբար 2023թ-ի հուլիսի 24-ին և 21-ին՝ ավելի քան 120 օր ժամանակահատվածով, և ՇՄՍԱԳ փաստաթղթերի հետ կապված հանրային քննարկումները ավարտվեցին 2023թ-ի դեկտեմբերի 1-ին: Ճանապարհի ֆինանսավորման մանրամասները վերանայվեցին ՇՄՍԱԳ հրապարակումից հետո, ուստի Ոչ տեխնիկական ամփոփագիրը կհրապարակվի այս մանրամասներով, ինչպես նաև դրա հետ կապված կառույցների հաստատման հետ կապված լրացուցիչ մանրամասներով, որը ՎԶԵԲ-ի դեպքում կներառի թունելի և ճանապարհի հյուսիսային հատվածը:

ՇՄՍԱԳ հրապարակման և խորհրդակցական զեկույց մշակվեց հանրային հանդիպումներն ավարտելուց հետո և ՇՄՍԱԳ փաթեթը թարմացվեց՝ շահագրգիռ կողմերից ստացված դիտարկումներն արտացոլելու համար: Այս փաստաթղթերի և ՇՄՍԱԳ գործընթացի միջոցով սահմանվել են միջոցներ՝ խուսափելու կամ մինիմիզացնելու համար ազդեցությունները, որոնք ներառված չէին սկզբնական ազգային ՇՄԱԳ-ում: ԲՍԳԾ-ն, ԲՍԿՊ-ն, ԿԳԾ-ն և ՏՇ-ն պատրաստվել են, որպեսզի Ծրագիրը մշակվի և իրականացվի ՎԶԵԲ կատարողականի պահանջների (ԿՊ) համաձայն:

ՇՄՍԱԳ-ի շրջանակներում գնահատվել է օպտիմալ երթուղին, որը որոշվել է ՏԻՈՒ-ի շրջանակներում բազմաչափորոշիչ վերլուծության հիման վրա, սակայն նաև որոշ այլընտրանքային տարբերակներ առաջարկվեցին՝ ծրագիրն օպտիմիզացնելու և ազդեցությունները մեղմելու նպատակով: Դրանք ներառում են Կատեգորիա 1-ի համար նախագծման չափորոշիչների, նախագծով սահմանվող արագության և գրադիենտի ուսումնասիրությունը, թունելի հարավային մուտքի դիրքի փոփոխությունը՝ թունելից փորած գրունտի քանակը նվազեցնելու համար՝ ավելի քիչ տեղափոխման և թափոնների հեռացման իմաստով առավելություններ ապահովելով, ինչպես նաև անասունների և հետիոտների համար անցման կետերով: ԲՍԳԾ-ն ներառում է Փոփոխության կառավարման ընթացակարգի համար պահանջը, որի համաձայն նախագծում կատարվող ցանկացած էական փոփոխություն պետք է գնահատվի Վարկատուի Բ և Ս պահանջների համաձայն: ՏԱ միջոցներ են հատկացվել՝ լրացուցիչ ուսումնասիրության և երկրաբանական վտանգի, ճանապարհի ծրագծի հետ կապված

ռիսկերը մոդելավորելու հետ կապված ԲՍԳԾ պահանջը կատարելու համար՝ որոշելու համար արդյոք կպահանջվե՞ն և որտե՞ղ մասնավորապես կպահանջվեն նախագծային փոփոխություններ և/կամ մեղմացման միջոցառումներ, ինչպես օրինակ՝ Լանջերի կայունացման պլաններ:

Ճանապարհային միջանցքի զբաղեցրած ողջ տարածքի համար մշտական օգտագործման նպատակով կօտարվի 290 հեկտար հողատարածք, ներառյալ մոտավորապես 570 հողատեսքեր, որոնցից 276-ը մասնավոր կերպով են տնօրինվում կամ մասնավոր սեփականություն են հանդիսանում, 253-ը՝ համայնքային սեփականություն են հանդիսանում, իսկ 41-ը պետական սեփականություն են հանդիսանում: Սիսիան-Քաջարան միջանցքի երկայնքով 276 մասնավոր սեփականություն հանդիսացող/օգտագործմամբ հողատեսքերից ազդակիր հողատեսքերը ներառում են 236 գյուղատնտեսական նշանակության, 34 բնակելի նշանակության և 6 հողօգտագործման այլ նշանակություն ունեցող հողատեսքեր: Տարաբնակեցումն ազդում է 2 բնակելի և 9 ոչ բնակելի կառուցվածքների վրա՝ ամբողջական ճանապարհային միջանցքի վրա, այդ թվում նաև 3 բիզնեսներ: Տարաբնակեցման շրջանակով սահմանված է փոխհատուցման և կենսապահովման պայմանների վերականգնման սկզբունքները Սիսիան-Քաջարան ճանապարհային միջանցքի համար, որոնք մանրամասն կներկայացվեն Տարաբնակեցման պլաններում (ՏՊ-ներ), որոնք, ակնկալվում է, որ պատրաստ կլինեն մինչև 2024թ-ի ապրիլ ամիսը: Ծրագրի համար կմշակվի ՏՊ՝ ՎԶԵԲ-ի՝ կատարողական պահանջներ 5-ի (ԿՊ5) համաձայն և կիրականացվի հատվածային՝ ճկունություն ապահովելու համար, որպեսզի կապալառուն կարողանա մուտք գործել հողատարածքներ և պլանավորել աշխատանքները: ՇՄՍԱԳ-ի շրջանակներում Տարաբնակեցման ավարտման անկախ աուդիտ է պահանջվում՝ Ծրագրի համար կենսապահովման պայմանների վերականգնման ավարտումը ստուգելու և ՏՊ-ի համաձայն Ծրագրի ազդակիր անձանց  համար ծրագրին նախորդող մակարդակներին հասնելու համար:

Սիսիանի և Քաջարանի միջև գոյություն ունեցող 130 կմ երկարությամբ ճանապարհի թույլատրելի առավելագույն արագությունը 90 կմ/ժ է, այնուամենայնիվ, ճանապարհին անցնելու համար պահանջվում է 3-4 ժամ՝ պայմանավորված երթևեկության վտանգավոր պայմաններով, որոնց մասին փաստում են ճանապարհատրանսպորտային պատահարների մասին տվյալները: ԲՍԳԾ-ով պահանջվում է, որպեսզի ՃԴ-ն իրականացնի մանրամասն նախագծի՝ Ճանապարհային անվտանգության ստուգում և որպեսզի նախագծային թիմն ուսումնասիրի Նախագծի ստուգման հաշվետվությունը և վերջնական նախագծում ներառի տեխնիկապես և տնտեսապես իրատեսական բոլոր խորհուրդ-առաջարկները: Ի լրումն դրան, ճանապարհի ստուգում/ճանապարհի վիճակի ուսումնասիրություն իրականացվի՝ Շինարարության երթևեկության կառավարման պլանի հետ միասին, որը կմշակվի՝ պայմանավորված մոբլիզացման և շինարարության փուլում շինարարական տեխնիկայի երթևեկությամբ: Հանրային ավտանգության և գյուղատնտեսական գործունեության իմաստով բացասական ազդեցությունները նվազեցնելու համար ճանապարհային անվտանգության իրազեկման և ճանապարհային անվտանգության ժամանակավոր միջոցառումներ կիրականացվեն ճանապարհի երկայնքով տեղակայված գյուղերում և քաղաքներում: Սա կներառի ճանապարհային անվտանգության մասին իրազեկումները տեղի դպրոցների համար:

Կենսաբազմազանության ելակետային վերլուծությունը հիմնվում էր զգալի թվով գրականության ուսումնասիրության, ազգային և տեղական գործընկերների հետ խորհրդակցությունների, տեղանքի ուսումնասիրությունների և դաշտային աշխատանքների հիման վրա, որոնք նախաձեռնվել են 2021թ. և 2022թ.՝ Սիսիան-Քաջարան-ի ողջ ճանապարհային միջանցքի համար: Ճանապարհային միջանցքը ներառում է մի շարք թունելներ և կամուրջներ, որոնք խուսափելու նպատակով կարևոր միջոցներ են, քանի որ դրանք նվազեցնում են կենսաբազմազանության իմաստով կարևոր տարածքներում հնարավոր միջամտությունները, կամ անցնում են դրանց տակով: Մասնավորապես, Բարգուշատի թունելը կանցնի Զանգեզուրի արգելավայրի և Զմրուխտ ցանցի համար առաջարկվող տեղամասի տակով (տեղամասի կոդը՝ AM0000015), իսկ թունելի մուտքը և ելքը տեղակայված կլինեն արգելավայրից դուրս: Ի լրումն դրան «Զմրուխտ Տաթև»

անվանումով տեղամասի մոտով է անցնում Դարբաս բնակավայրի մոտ նախատեսվող ճանապարհահատվածը (տեղամասի կոդը՝ AM0000016):

Առաջարկվող ճանապարհային միջանցքի Քիրս-Գեղի ճանապարհատվածն անցնում է Զանգեզուրի կարևոր թռչնաբանական տարածքի (ԿԹՏ) և Կենսաբազմազանության հիմնական տարածքների (ԿՀՏ) միջով: Ծրագիրը գտնվում է Մեղրու ԿԹՏ-ից հյուսիս-արևմուտք՝ մոտ 4.5 կմ, որը նաև նույնականացվում է որպես Մեղրու ԿՀՏ: Ներկայումս Հատուկ պահպանվող տարածքների (ՀՊՏ) համար կառավարման պլաններ չկան, ԿՀՏ-ներ և ՎՀՑ-ներ կան, այնուամենայնիվ, հանդիպումներ են անցկացվել Շրջակա միջավայրի նախարարության և Զանգեզուրի արգելավայրի պահպանվող տարածքների (ՊՀ) ղեկավարի հետ, ում կարծիքը Ծրագրի մասին ընդհանուր առմամբ դրական էր: ՊՏ-ի ղեկավարը տրամադրեց մեղմացնող միջոցառումների ցանկը, որոնք դիտարկվել են ԿԳԾ-ի շրջանակներում: Շրջակա միջավայրի նախարարությունը քննության առավ ԿԳԾ-ն, և ներկայացված դիտողությունները իրացվեցին ԿԳԾ-ի թարմացված տարբերակում: Երկու հաստատություններն այն կարծիքին էին, որ եթե կենսաբազմազանության մեղմացման միջոցառումները կիրառվեին, կենսաբազմազանության հիմնական արժեքների վրա զգալի ազդեցություններ չէին ակնկալվի: Ի լրումն դրան, ճանապարհային միջանցքի Համապատասխան գնահատումը ցույց է տալիս, որ առաջարկվող մեղմացման միջոցառումների (ԿԳԾ-ի շրջանակներում) իրականացման դեպքում, որևէ պահպանվող տարածքի կամ միջազգայնորեն ճանաչված կենսաբազմազանության տարածքների ամբողջականության վրա ազդեցություն չի լինի:

ՇՄՍԱԳ-ով, կրիտիկական բնական միջավայրերի գնահատմամբ, Համապատասխան գնահատումով և ԿԳԾ-ով գնահատվել են կենսաբազմազանության առաջնահերթ առանձնահատկությունների, ինչպես նաև բնակության տեսակների և վայրերի վրա ազդեցությունները, որոնք բնակության կրիտիկական միջավայր են առաջացնում՝ կապված բնական միջավայրի կորստի և դեգրադացիայի, տեսակների խախտման, հնարավոր մահացության և միակցվածության կորստի և հնարավոր պատահական աղտոտման հետ: ԿԳԾ-ը և ԲՍԳԾ-ը ներառում են մանրամասն նախագծման պահանջ, որը ներառում է վայրի կենդանիների համար անցումները՝ ազդեցություններից խուսափելու համար, որակավորված փորձագետների նշանակումը, շինարարության և շահագործման փուլերում մեղմացնող միջոցառումների իրականացումը և Կենսաբազմազանության փոխհատուցման կառավարման պլանի մշակումն և իրականացումն ապահովելու համար, որպեսզի բնական միջավայրի զուտ կորուստ չլինի, և որպեսզի ապահովվի կրիտիկական բնական միջավայրի զուտ աճ:

Ավելորդ գրունտը, որը չի կարող կրկին օգտագործվել ճանապարհաշինության համար, պետք է թափվի Գրունտի թափելու համար նախատեսվող վայրերում: Գրունտի թափելու համար նախատեսվող վայրերը նախապես նույնականացվել և գնահատվել են ՇՄՍԱԳ-ի շրջանակներում: Գրունտի թափելու համար նախատեսվող վայրերի մեծ մասի տեղակայման վայրերը նախապես հաստատվել են Սիսիան և Քաջարան համայնքների վարչակազմերի կողմից:

Ընդհանուր առմամբ, նյութական մշակութային ժառանգության 76 օբյեկտներով 52 տեղամասեր գտնվում են 500 մ հեռավորության վրա՝ առաջարկվող ճանապարհային միջանցքի և նախնական առաջարկվող Գրունտի թափելու համար նախատեսվող տեղամասերի երկու կողմերում: 46 տեղամասեր՝ մշակութային ժառանգության 67 օբյեկտով, ամենայն հավանականությամբ կլինեն անմիջականորեն Սիսիան-Քաջարան ճանապարհի կառուցման ազդեցության գոտում և կարող են պահանջել մշակութային ժառանգության որոշ օբյեկտների տեղափոխում և տեղամասից դուրս կոնսերվացում: Բացի այդ, ԲՍԳԾ-ն պահանջում է մշակել կանաչապատման միջոցառումներ՝ ընդհանուր առմամբ, նոր ճանապարհի տեսողական ազդեցությունը նվազեցնելու համար, բայց հատկապես, այն հատվածներում, որտեղ ճանապարհը մոտ է ժառանգության կարևոր կառույցներին:

Ոչ նյութական մշակութային ժառանգության վրա, որոնք գրանցված են արժեքների ազգային ցուցակում և ՅՈՒՆԵՍԿՕ-ի ներկայացուցչական ցանկում, ոչ մի բացասական ազդեցություն չի սպասվում: ՇՄՍԱԳ-ի բացահայտման հանդիպումների շրջանակներում խորհրդակցություններ են անցկացվել մշակութային ժառանգության յուրաքանչյուր օբյեկտի հիմնական օգտագործողների և պահապանների հետ և հաշվի են առնվել նրանց կարծիքը: Մշակվել է Մշակութային ժառանգության կառավարման մանրամասն պլան (ՄԺԿՊ), որը պետք է համաձայնեցվի ազգային իշխանությունների և վարկատուների հետ, ինչպես նաև պետք է ներառվի մրցութային փաստաթղթերում: ՄԺԿՊ-ի իրականացումը կվերիֆիկացվի անկախ մոնիթորինգի միջոցով:

Ծրագրի Բ և Ս կատարողականը հիմնված է Ծրագրին ներհատուկ Բ և Ս կառավարման շրջանակների և համակարգերի վրա, որոնք մշակվել և իրականացվել են իրենց կապալառուների կողմից: Հետևաբար, Ծրագրի հետ կապված զգալի ռիսկը կկառավարվի կապալառուների կողմից ու կմշտադիտարկվի ՃԴ-ի կողմից, և ապահովելով, որպեսզի կապալառուները տեղյակ են իրենց պարտականությունների մասին, և որպեսզի նրանք իրականացնեն համապատասխան գործողություններ՝ այս ռիսկերը խուսափելու, նվազագույնի հասցնելու, մեղմելու և կառավարելու համար, որոնք նշված են ՇՄՍԱԳ-ում, ԲՍԿԾ-ում, ԿԳԾ-ում և դրանց հետ կապված կառավարման պլաններում: ՃԴ-ն Տեխվերահսկող ինժեների միջոցով կմշտադիտարկի Կապալառուների կողմից ԲՍԿՊ-ի և ԲՍԳԾ-ի մեղմացման միջոցառումների իրականացումը: Վարկատուների Բ և Ս մշտադիտարկման խորհրդատուները ևս կներգրավվեն՝ Բ և Ս կառավարման պլանների իրականացումը վերահսկելու և Բանկին կանոնավոր կերպով զեկուցելու համար:

ԲՍԳԾ-ի շրջանակներում պահանջվում է Բ և Ս կառավարման համապարփակ համակարգ, որպեսզի կապալառուները հավուր պատշաճի լուծեն Ծրագրի հետ կապված Բ և Ս ազդեցությունները և ռիսկերը: Սա ներառում է ԿՊ2-ին համապատասխանեցված ՄՌ քաղաքականությունը և ընթացակարգերը՝ ներառելով աշխատակցի բողոքարկման մեխանիզմը և Վարքագծի կանոնները՝ ներառելով Գենդերային բռնության և սեռական ոտնձգության հետ կապված հարցերը՝ գումարած աշխատակցի կացարանով ապահովման հարցերը ևս պահանջվում է ներկայացնել աշխատակցի կացարանով պահովման համար ՄՖԿ/ՎԶԵԲ ուղեցույցների համաձայն:

ՇԿՆՊ-ը ներառում է տեղեկատվության հրապարակման ամփոփագիրը և մինչ այդ օրն անցկացված համայնքային հանդիպումների, ինչպես նաև առաջիկա խորհրդակցական միջոցառումների նկարագիրը և Ծրագրի բողոքարկման մեխանիզմը: ՇՄՍԱԳ նախապատրաստման ընթացքում 2022թ. և 2023թ-ին ճանապարհային միջանցքի համար անցկացվել են շահագրգիռ կողմերի ներգրավման 49 միջոցառումներ, որոնք ներառում էին խորհրդակցական հանդիպումները, ֆոկուս խմբի քննարկումները, հանրային քննարկումները և շրջանակի որոշման միջոցառումները 16 գյուղերում և բնակավայրերում: ԲԶԳԾ-ն պահանջում է, որպեսզի Ծրագրի համար նշանակվեն Հասարակայնության հետ կապերի համայնքային պատասխանատուներ, որոնցից առնվազն մեկը՝ իգական սեռի:

ԾԱՓ-ն կթարմացվի Ծրագրի իրականացման փուլում:

## Տեխնիկական աջակցություն

Տեխնիկական աջակցության հետևյալ առաջադրանքներն են նախատեսվում այս Ծրագրի շրջանակներում.

**Նախքան ստորագրումը**

- **Տեխնիկատնտեսական իրագործելիության ուսումնասիրություն –**

Առաջադրանքի արժեքն է 765,580 եվրո, որը կֆինանսավորվի ԵՄ Հարևանության ներդրումային հարթակից (ԵՄ ՀՆՀ):

- **Բնապահպանական և սոցիալական ազդեցության գնահատում –** Առաջադրանքի արժեքը կազմում է 686,764 եվրո, որը կֆինանսավորվի ԵՄ Հարևանության ներդրումային հարթակից (ԵՄ ՀՆՀ):
- **Էլեկտրամոբիլների ուղիների և ռազմավարական նախաձեռնությունների ճանապարհային քարտեզ -** Հանձնարարականի նպատակն է 74,950 եվրո՝ ԵՄ Հարևանության ներդրումային հարթակի կողմից (ԵՄ ՀՆՀ):
- **Երկրաբանական վտանգների և քարաթափերի հետազոտություն և մոդելավորում –** Հանձնարարականի արժեքը 164,974 եվրո է, ՎԶԵԲ-ի Բաժնետերերի հատուկ հիմնադրամի (ԲՀՏ) կողմից ֆինանսավորվող:

**Ստորագրումից հետո**

- **Աջակցություն գնումներին -** Հանձնարարականի գնահատված արժեքը մինչև 350,000 եվրո է, ակնկալվում է, որ կֆինանսավորվի ՎԶԵԲ-ի Բաժնետերերի հատուկ հիմնադրամի (ԲՀՏ) կողմից:
- **Ճանապարհային ակտիվների կառավարման պլան -** Հանձնարարականի գնահատված արժեքը մինչև 500,000 եվրո է, որի ֆինանսավորման աղբյուրը պետք է հաստատվի:
- **Վարկատուի տեխնիկական մոնիթորինգ -** Այս հանձնարարականի գնահատված արժեքը մինչև 500,000 եվրո է, ֆինանսավորման աղբյուրը պետք է հաստատվի:
- **Վարկատուի բնապահպանական և սոցիալական մոնիթորինգ -** Այս հանձնարարականի գնահատված արժեքը կազմում է մինչև 500,000 եվրո, ֆինանսավորման աղբյուրը պետք է հաստատվի:

## Լրացուցիչ

ՎԶԵԲ-ն առաջարկում է ֆինանսավորում, որը հասանելի չէ խելամիտ պայմաններով առևտրային աղբյուրներից: Ծրագիրը կկենտրոնանա կլիմային դիմակայության վրա՝ ներառելով միջոցներ՝ ուղղված շինարարության և գործառնական փուլերում կլիմայական ֆիզիկական ռիսկերը մեղմելուն:

## Ընկերության կոնտակտային տվյալները

«Ճանապարհային դեպարտամենտ» ՀԻՄՆԱԴՐԱՄ

info@armroad.am
+37410511391
https://armroad.am/en
Կառավարության տուն 3, Հանրապետության հրապարակ, Երևան, 0010